

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԻԴՐՈՇԻՆԱՐԱՐ - 5»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱԳԼԱՔԱՐԱՅԻՆ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՀԻԴՐՈՇԻՆԱՐԱՐ - 5» ԲԲԸ
տնօրեն՝



Ա. Թադևոսյան

Երևան - 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10
1.1 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	10
1.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը	15
1.2.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները	16
1.2.2. Բնառեսուրսների օգտագործումը	16
1.3 Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը	17
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	25
2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը	25
2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը	27
2.3 Կլիմա	30
2.4 Մթնոլորտային օդ	32
2.5 Զրային ռեսուրսներ	34
2.6 Հողային ծածկույթ	37
2.7 Բուսական և կենդանական աշխարհ	40
2.8 Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ	49
2.9 Պատմության և մշակույթի հուշարձաններ	52
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	60
3.1 ՀՀ Կոտայքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը	60
3.2 Ազդակիր համայնքները, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը	63
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	66
4.1 Հիմնական բնապահպանական ռիսկերը	66
4.2 Հանքարդյունաբերության ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները	66

5. ՎՆԱՍԱԿԱՐԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ
ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ -----67

- 5.1 Մթնոլորտային օդ -----67
- 5.2 Մակերևույթային և ստորգետնյա ջրեր -----67
- 5.3 Հող-----68
- 5.4 Բուսական և կենդանական աշխարհ -----69
- 5.5 Պատմամշակույթային արժեքներ -----70
- 5.6 Սոցիալական ազդեցություն -----71
- 5.7. Բնապահպանական մշտադիտարկումների պլան -----72
- 5.8. Բնապահպանական կառավարման պլան -----76
- Օգտագործված գրականություն-----80

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև նշված հասկացությունները ունեն հետևյալ իմաստն ու նշանակությունը.

օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.

օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

շրջակա միջավայր՝ բնական եւ մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործոնների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը:

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը:

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը:

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն:

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը:

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության:

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին

ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանաժոնների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանաժոնների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտաձին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանաժոնների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան՝ բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները,

պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրի (այսուհետ՝ հանքավայր) նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Հանքավայրի պաշարներն հաստատվել են ՀՍՍՀ ՊՏՀ-ի կողմից 01.03.1983թ. N265 արձանագրությամբ, 33.3 հա տարածքում, հետևյալ կարգերով և քանակներով՝

A - 4414.34 հազ.մ³,

B - 6035.83 հազ.մ³,

C₁-3506.70 հազ.մ³,

A+ B+ C₁ = 13956.9 հազ.մ³

Հանքավայրի պաշարները գնահատվել է որպես լցանյութ ծանր բետոնի արտադրության համար: Հանքավայրի ավազը և կոպիճը բավարարում են համապատասխանաբար ԳՈՍՏ 8736-77 և ԳՈՍՏ – 8268-75-ի պահանջներին:

Հանքավայրի հաստատված պաշարների եզրագծի վրա գտնվող լեռնային փորվածքների կոորդինատները ARM WGS 84 համակարգով բերված են ստորև.

Հ/Հ	Փորվածքը և համարը	Կոորդինատները		Հ/Հ	Փորվածքը և համարը	Կոորդինատները	
		X	Y			X	Y
1	Հոր. 1	4453839	8476585	6	Հոր. 6	4453515	8477060
2	Հոր. 2	4453945	8476746	7	Հոր. 7	4453547	8476821
3	Հոր. 3	4453945	8476608	8	Հոր. 8	4453648	8476587.7
4	Հոր. 4	4453609	8477728	9	Հոր. 13	4453885	8476552
5	Հոր. 5	4453539	8477298	10	Մերկ. 1	4453867	8477220

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից նստվածքներ, բազալտներ, ավազներ, կոպճագլաքարեր, ավազաքարային կավեր՝ չորրորդական հասակի:

Ժամանակակից նստվածքները ներկայացված են այլովիալ-դելյուվիալ նստվածքներով, ունեն լայն տարածում և 0.5-12 մ հզորություն:

Բազալտների և խարամացած բազալտների ելքերը տեղադրված են Ջաղացների-ձորի աջ լանջում, որոնց տեղ-տեղ ծածկում են ավազները և

կոպճագլաքարերը: Բազալտները հանդիսանում են հանքավայրի շրջանում գտնվող մի շարք հրաբխային կոների հրաբխավիժական գործունեության արգասիք: Դրանք խիստ ծակոտկեն, երբեմն պղպջակային հրաբխածին ապարներ են և առաջացել են հրաբխային ապարատի սառելու հետևանքով՝ անհավասարաչափ հզորությամբ, մոխրագույն և մոխրաշագանակագույն: Հանքավայրի բազալտների վերին մերձմակերևութային մասը տեղ-տեղ հողմահարված, ջարդոտված, ճեղքավոր է, ճեղքերը կարբոնատացած են: Ըստ խորության բազալտները թարմ են, խիստ ճեղքավոր, խարամացած:

Ավազները և կոպճագլաքարերը հանդիսանում են օգտակար հանածոները և երկրաբանահետախուզական աշխատանքների օբյեկտը: Ձևաբանորեն ներակայացված են կտրտված ռելիեֆի վրա հորիզոնական տեղադրված շերտերով (ավազի, կոպճի և այլոց): Ավազները և կոպճագլաքարերը ջրային միջավայրում վերանստեցման արգասիք են՝ ձևավորված զանազան լեռնային ապարների (գրանիտների, գրանոդիորիտների, սիենիտների, գրանոսիենիտների և այլոց) քայքայման և հողմահարման արդյունքում:

Ավազները և կոպճագլաքարերը փխրուն, որոշ չափով խտացած, չցեմենտացած նստվածքային ապարներ են՝ կազմված լեռնային ապարների տարբեր աստիճանի գնդավորված բեկորներից և տարատեսակ կազմի ու ձևի միներալներից:

Օգտակար հաստվածքը ներկայացված է տարահատիկ ավազներով և տարբեր չափերի կոպճագլաքարերով:

Օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ հաճախ նկատվում է բոլոր տարատեսակների շերտադարսում, ինչը պայմանավորված է դրանց առաջացման պայմաններով: Հորատված հորտանցքերի տվյալներով ավազների և կոպճագլաքարերի հզորությունը հասնում է 60-70 և ավելի մետրերի:

Հանքավայրի տարածքի մակերեսը (պաշարների հաշվարկի մեջ ընդգրկվող) կազմում է 33,3 հա:

Ավազների և կոպճագլաքարերի քիմիական կազմը հետևյալն է (%%).

SiO ₂	Fe ₂ O ₃	CaO	K ₂ O+Na ₂ O	Al ₂ O ₃	TiO ₂	MgO	SO ₃	Խոնավ.	ԿՇԺ
59.9	6.3	5.5	7.61	15.65	1.13	2.9	հորք.	0.04	0.73

Ավազաքարային կավերը օգտակար հաստվածքը հիմնատակող ապարներն են և դեպի երկրի մակերևույթ ելք չունեն: Կավերը դեղին գույնի են, փխրուն, ավազաքարային, շերտավոր:

Ավազների և կոպճագլաքարերի ֆիզիկամեխանիկական հատկությունները բերվում են ստորև.

1. Ավազ.

- ծավալալիրքային զանգվածը՝ 1366 կգ/մ³,
- մակնիշն ըստ ծավալիրքային զանգվածի՝ 1407,
- ավազի խումբը՝ մանր, միջին, խոշոր
- կավային կոշտուկների պարունակությունը ավազներում՝ 0.07,
- փոշենման և կավային մասնիկների պարունակությունը ավազներում՝ 2.6 %,
- աղտոտող խառնուրդների պարունակությունը՝ բացակայում է,
- օրգանական խառնուրդների պարունակությունը՝ բացակայում է,
- խոշորության մոդուլը՝ 3.35,
- կոպճի տոկոսային պարունակությունը՝ 19.4,
- ավազի տոկոսային պարունակությունը՝ 80.6,

2. Կոպիճ

- ծավալալիրքային զանգվածը՝ 1208 կգ/մ³,
- մակնիշն ըստ ծավալիրքային զանգվածի՝ 1250,
- փոշենման և կավային մասնիկների պարունակությունը զանգվածում՝ 0.8 %,
- կավային կոշտուկների պարունակությունը՝ 0.04 %,
- թիթեղային և ասեղնաձև հատիկների պարունակությունը՝ 2.5 %,
- խճի մակնիշն ըստ հատիկների ձևի՝ խորհանարդաձև,
- խճի ամրությունը չոր վիճակում՝ 15.2 կգ/մ²,
- խճի մակնիշն ըստ ամրության չոր վիճակում՝ Dp-17,
- թույլ ապարների հատիկների պարունակությունը՝ 28.8 %:

Ըստ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տեղեկատվության (5-ԵՀ հաշվետվության) հանքավայրը շահագործվել է 1996-2003թթ. «Աբովյանի ՇԻԿ» ՊՁ կողմից: Հանքավայրի մնացորդային պաշարները կազմում են՝

A կարգով – 3692.5 հազ.մ³

B կարգով – 5775.5 հազ.մ³,

C₁ կարգով -3359.0 հազ.մ³,

$$A + B + C_1 = 12826.0 \text{ հազ.մ}^3:$$

«ՀԻԴՐՈՇԻՆԱՐԱՐ 5» ԲԲ ընկերությունը (հասցե՝ Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ա. Ահարոնյան փող. 82. 45բն.) ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսում է ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքի վարչական սահմաններում գտնվող 10.3112հա տարածքում իրականացնել հանքավայրի շահագործման աշխատանքներ: Նշված հողամասի շուրջ 9.1հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման գործառնական նշանակության և շուրջ 1.2հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասեր են: Ընդերքօգտագործման իրավունք ստանալուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գյուղատնտեսական նշանակության հողամասերը կփոխարինվեն ընդերքօգտագործման:

Ստորև ներկայացվում է Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրի և նախնական գնահատման հայտով ներկայացված հաստատված պաշարների եզրագծերը:


Նշված տարածքում պաշարների քանակը կազմում են՝ շուրջ 3700,0 հազ.մ³:

Տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են.

Կոորդինատային համակարգը՝ ARM WGS-84:

ՀՀ	X	Y
1	4453911	8477035
2	4453883	8477197
3	4453805	8477337
4	4453547	8477337
5	4453515	8477035

Իրավիճակային քարտեզ
1:25000



- Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրի հաստատված պաշարների եզրագիծ -33.3հա
 - Նախնական գնահատման հայտով ներկայացված հաստատված պաշարների եզրագիծ – 10.3հա
- Նկար 1

1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներն իրականացնել բաց եղանակով:

Ելնելով օգտակար հաստվածքի տեղադրման լեռնաերկրաբանական պայմաններից, նախագծվող բացահանքը բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

Շահագործման ժամկետը 20 տարի,

Մարվող պաշարների քանակը 3.7 մլն.մ³,

Օգտակար հանածոյի միջին հզորությունը 41.9 մ

Մակաբացման ապարների քանակը 113600 մ³,

Մակաբացման ապարների միջին հզորությունը 1.6 մ,

Տարեկան մարվող պաշարների քանակը 185 հազ.մ³,

Առավելագույն երկարությունը 350 մ,

Առավելագույն լայնությունը 300 մ

Հայցվող տարածքի մակերեսը 10.3 հա

Հաշվի առնելով տեղամասերի երկրաբանական, հիդրոերկրաբանական և գեոմորֆոլոգիական պայմանները, ինչպես նաև մակաբացման ապարների ոչ մեծ հզորությունը, հանքավայրի տեղադիրքը, հանքամարմնի տեղադրման պարամետրերը հանքավայրի շահագործման նախագծով նախատեսվելու է՝

1. Հանույթային աշխատանքները կատարել առանց հորատապայթեցման աշխատանքների՝ էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնային համալիրի միջոցով:

2. Հանքավայրը շահագործել բաց եղանակով՝ վերևից-ներքև խորացումով մշակման համակարգով:

3. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով, միահերթ, 8 ժամ տևողությամբ հերթափոխով և տարվա 260 աշխատանքային օրով:

4. Մակաբացման ապարների հեռացումը իրականացնել լեռնատրանսպորտային համալիրով, ժամանակավոր արտաքին և ներքին լցակույտեր տեղափոխմամբ:

5. Բացահանքի աշխատանքների կազմակերպման համար արտադրական հրապարակ իր անհրաժեշտ կառույցներով:

6. Շահագործման ավարտից հետո կատարել հանքավայրի ռեկուլտիվացիա:

1.2.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից ելնելով նախատեսվում է տեղամասի մշակումը ընդլայնական խորացող մշակման համակարգով, մակաբացման ապարները սկզբնական շրջանում արտաքին այնուհետև ամբողջ հզորությամբ մշակված տարածքներում ներքին լցակույտ տեղափոխելով:

Մշակման համակարգի պարամետրերն են՝

- հանույթային աստիճանի բարձրությունը —10 մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը - 70-75°,
- անվտանգության բերմայի նվազագույն լայնությունը – 3.0 – 3,5 մ,
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը – 20.0 մ:

Աշխատանքների վերաբերյալ մանրամասները կներկայացվեն արդյունահանման նախագծում՝ ՇՄԱԳ հիմնական փուլում:

1.2.2. Բնառեսուրսների օգտագործումը

Ջրամատակարարումը և ջրահեռացումը

Փոշենստեցման նպատակով պետք է փոշեառաջացման օջախները /հանքախորշերը, լցակույտը, տեխնոլոգիական ավտոճանապարհները/ սիստեմատիկաբար ջրվեն:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով:

Ջուրը բերվում է ZIL-431412 ջրցան-վազող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ՍԻ-ԲԼԿ-1.4 ջրի ցիստեռնով:

Ջրցան մեքենայի աշխատանքը կապահովվի պայմանագրային հիմունքներով:

Ջրամատակարարումը՝ խմելու ջուրը՝ «Վեոլիա ջուր» ընկերությունից, և տեխնիկական ջուրը՝ Կոտայքի ՋՈՈ-ից իրականացվում է ավտոնոմիստեռներով պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային կեղտաջրերը ինքնահոս կերպով թափվելու են 25.0մ³ տարողությամբ, անջրաթափանց արտաքնոցի հորը, որտեղից էլ կեղտատար մեքենայով պարբերաբար հեռացվելու են:

Խմելու ջրի օրական ծախսը հաշվվում է 25լ մարդ/օր:

Տեխնիկական ջուրը նախատեսվում է օգտագործել շոգ և չոր եղանակներին՝ հանքախորշում, արտադրական հրապարակում, ավտոճանապարհներին՝ փոշենստեցման նպատակով՝ յուրաքանչյուր քառ. մ-ի համար 1լ ջրի ծախս հաշվարկով:

Խմելու ջրի ծախսը օրական կազմում է 0.5մ³:

Տեխնիկական ջրի ծախսը շոգ և չոր եղանակներին հերթափոխում կազմում է 7.0մ³:

1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

«ՀԻԴՐՈՇԻՆԱՐԱՐ - 5» ԲԲԸ-ն իր գործողություններում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են հանքարդյունահանման ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը:

Դրանք են՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001թ.): “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277- Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

“Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002թ.) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերեսային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի: Վերը նշված օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, “Բ” և “Գ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունը իրանացվում է երկու փուլով: Առաջին փուլում ներկայացվում է գործունեությունը նկարագրող հակիրճ բացատրագիր (նախնական գնահատման հայտ), կազմակերպվում են առաջին հանրային քննարկումները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնապահպանության նախարարություն: 30 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կազմում գործող փորձաքննական կենտրոնը ուսումնասիրում է հայտը և կազմակերպում երկրորդ հանրային քննարկումները, որից հետո տրամադրում է տեխնիկական առաջադրանք “Ա” և “Բ” կատեգորիաների համար, իսկ “Գ” կատեգորիայի դեպքում՝ փորձաքննական եզրակացություն:

Երկրորդ փուլում ձեռնարկողը կազմակերպում է երրորդ հանրային լսումները, որտեղ ներկայացնում է գործունեությունը նկարագրող փաստաթուղթը (ծրագիր, նախագիծ) և ՇՄԱԳ հաշվետվությունը, որոնք, լսումների նյութերի հետ մեկտեղ ներկայացվում են լիազոր մարմին:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննության հիմնական փուլը տևում է 60 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են չորրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք /04.03.1996թ./

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (23.11.1999 թ.):

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է

«Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005թ.)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

«ՀՀ բույսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014 թ. N 781-Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրահայի) հիգիենիկ նորմերը ՀՆՆ 2.2.4-009-06 հաստատելու մասին”:

-ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր Գիրք

-ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր Գիրք

-ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” N 1404-Ն որոշում

-ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի “Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին” N 781-Ն որոշում:

-«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք ՊՈԱԿ-ի կանոնադրություն

-«Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,

-«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշում:

- Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ.) և ՀՀ կառավարության 02.02.2006 թվականի N 160-Ն որոշումը,

- ՀՀ կառավարության 14.08.2008 թվականի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշումը,

- ՀՀ կառավարության 14.12.2017 թվականի «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների սահմանելու և ՀՀ կառավարության 2006թ.մայիսի 26-ի N750-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1643-Ն որոշումը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ


2.1. Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի ենթաշրջանում և տեղակայված է Աբովյան քաղաքից 12 կմ արևելք, գտնվում է Գեղաշեն գյուղի հարավ-արևելյան ծայրամասում: Գեղաշենի վարչական տարածքը սահմաններով կից է՝ Կամարիս, Ջառ, Սևաբերդ, Գառնի գյուղական և Գեղարքունիկի մարզի Գավառ քաղաքային համայնքներին: Գյուղատեղի միջով դեպի հյուսիս-արևելք անցնում է Կամարիս-Գեղաշեն-Ջառ տեղական նշանակության ավտոճանապարհը (նկ. 2):

Հանքավայրը Երևան քաղաքի հետ կապված է 25 կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով:

Հանքավայրի շրջանը բնութագրվում է բարձրունքա-բլրային ռելիեֆով: Հանքավայրի շրջանի խոշորագույն քաղաքաշինական միավորը Աբովյան քաղաքն է, որի հարևանությամբ է անցնում Երևան-Սևան մայրուղին: Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից 1450(մ): 2019թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմել է 44844 մարդ: Այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության 32.6%-ը, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 17.8%-ը: Վարչական տարածքը կազմում է 1112.98հա: Քաղաքը նախկինում համարվել է խոշոր արդյունաբերական կենտրոն: Գործում են սննդամթերքի, խմիչքների, դեղերի և դեղագործական ապրանքների, ինչպես նաև օրգանական պարարտանյութերի արտադրության ձեռնարկություններ, հանքարդյունաբերական տեխնիկայի ներմուծման, շինարարական կազմակերպություններ: Քաղաքում է գտնվում Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնը: Քաղաքում գործում են պետական ճարտարագիտական քոլեջը, պետական էներգետիկական քոլեջը, Լ.Օրբելու անվան համալսարանը և բժշկական ուսումնարանը:

Գեղաշեն համայնքը գտնվում է Կոտայքի մարզում, մարզկենտրոն Հրազդան քաղաքից 50կմ հեռավորության վրա, է, Աբովյանից 12կմ հարավ-արևելք, Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտին:



⊗ Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայր

Նկար 2



2.2. Ռեիեֆը, երկրաձևաբանությունը

Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրը երկրաձևաբանական տեսակետից տեղադրված է Կոտայքի (Քանաքեռի) հրաբխային սարահարթի կենտրոնական մասում, որը կտրտված է բազմաթիվ ձորակներով և սարավանդային խոր գետահովիտներով:


Կոտայքի սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները: Գեղամա լեռնաշղթան կենտրոնական մասում բարձրացած հիմքով լեռնավահան է, մոտ 65 կմ երկարությամբ և 35 կմ լայնությամբ, որի վրա շարված են բազմաթիվ հրաբխային կոներ, այդ թվում ամենաբարձր գագաթ Աժդահակը՝ 3597.3 մ բարձրությամբ, ինչպես նաև Սևկատարը 3225.1մ, Սպիտակասարը 3555.7մ, Նազելին 3312մ, Վիշապասարը 3157.7մ, Եռակատարը 2589.6մ, Գեղասարը 3443մ, Ծաղկավետը 3076մ, Մանկունքը 2932.1մ: Հաճախ Գեղամա լեռնաշղթայի մեջ են մտցվում նաև Հատիս 2529.4մ, Գութանասար 2299.6մ, Մենակսար 2399.4մ, Մեծ Լճասար 2393.8մ, Փոքր Լճասար 2334.2մ, Արմաղան 2829.1մ և այլ հրաբխային լեռնագագաթներ, որոնք բավական հեռու են տեղադրված բուն լեռնաշղթայից:

Հարավ-արևմուտքում Կոտայքի սարահարթը աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Ջրվեժ գետերի ջրբաժանը: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Տեղ-տեղ բաժրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները ներկայացված են ստորև նկար 3 և 4-ում:




Նկար 3. Մակերևույթի գերակշռող թեքություններ











Նկար 4. Երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ

Սողանքներ, սեյսմիկ բնութագիր

Տեղամասի տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինը գտնվում է տեղամասից շուրջ 6.0 կմ հյուսիսարևուտք




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Սողանքներ
-  Խոշոր սողանքային տարածքներ
- Հողմահարման գոյրիներ*
-  Ջերմակենսաափմիական
-  Ջերմասառնամանիքային
-  Նեոտեկտոնական բարձրացումների հավասարագծեր (կմ)
-  Տեկտոնական խախտումներ
- Ավազանների սահմաններ*
-  Գետային երկրորդ կարգի
-  Գետային երրորդ կարգի

Նկար 5. Սողանքներ

Ըստ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28 դեկտեմբերի 2020թ. N 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20.04 – 2020 «Երկրաշարժադինացկուն շինարարություն. նախագծման նորմեր» նորմատիվային փաստաթղթի դրույթների հայցվող տեղամասի տարածքը գտնվում է երկրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

Ստորև բերվում է հատված ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզից՝



Նկար 6. Սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզ

2.3. Կլիման

Կոտայքի մարզի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական պարամետրերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայաններն ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք:

Կլիման հիմնականում չորային է: Հաճախակի են հյուսիսից փչող քամիները: Երբեմն ամռանը ջերմաստիճանը հասնում է մինչև $+30$, իսկ ձմռանը՝ $-20-22$ աստիճան: Ձմեռը ցուրտ է, համեմետաբար խոնավ հաստատուն ձնածածկույթով: Հունվար ամսվա օդի միջին ջերմաստիճանը տատանվում է $-5^{\circ}-10^{\circ}\text{C}$ սահմաններում: Գարունը համեմատաբար տևական է, մեղմ բարեխառն: Ամառը տաք է, չափավոր

խոնավ, պարզ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը կազմում է 15°C-ից 18°C, առավելագույնը 30°C: Աշնանը տաք է՝ անհողմ եղանակների գերակշռությամբ: Անսառնամանիք ժամանակամիջոցի տևողությունը շուրջ 200 օր է: Տարեկան տեղումները 600-700 մմ: Օդի բազմամյա միջին ջերմաստիճանը կազմում է 5°C: Ջերմաստիճանների անցումը 0°C-ից տեղի է ունենում նոյեմբերին և ապրիլին: Նոյեմբեր և ապրիլ ամիսներին ջերմաստիճանը կարող է իջնել 0°C-ից ցածր:

Ձմռանը գերակայում են հարավային, հարավ-արևմտյան քամիներ՝ 1,5 – 2 մ/վրկ արագությամբ: Ամռանը դիտվում են հյուսիս-արևելյան ուղղությամբ քամիներ՝ 2-3,2 մ/վրկ :

Առաջին ձյունը տեղում է դեկտեմբերի վերջին տասնօրյակին և պահպանվում է մինչև մարտի վերջը: Քամիների գերակշռող ուղղությունը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք է: Քամու արագացման ճնշումը՝ 450կգ/մ² է:

Օդի ջերմաստիճանի միջին տարեկան և ըստ ամիսների ցուցանիշները բերված են աղյուսակում.

Օդի միջին ջերմաստիճանը, C°												
Տարեկան	Ըստ ամիսների											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
12	-3.6	-1.4	2.7	10.8	13.7	16.8	21.5	23	18	12	6.2	0.8


Օդի բացարձակ մինիման ջերմաստիճանը՝ -30°C, իսկ մաքսիմալը՝ +39°C:

Տարեկան տեղումների քանակը կազմում է 460-530մմ: Ըստ տարվա եղանակների տեղումները բաշխվում են՝ (մմ)

Ձմեռ	Գարուն	Ամառ	Աշուն
140	175	60	162

Հողի սառեցման խորությունը՝ 75 սմ է: Ձյան ծածկույթի միջին բարձրությունը՝ 25-40 սմ: Ձյունե ծածկույթի կշիռը՝ 400կգ/մ²:

Ստորև նկար 7-ում ներկայացված են շրջանին բնորոշ կլիմայի տիպերի տարածումը



Նկար 7

2.4. Մթնոլորտային օդ

«Տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Հանքի տարածքում չկան գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտակայան Գեղաշենի ավազակոպճագլաքարանային հանքավայրի մոտակայքում չկա, սակայն համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի՝ մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Գեղաշենի համայնքը, ընդունված են տարածքի օդի ֆոնային աղտոտվածության հետևյալ ցուցանիշները.

- Փոշի՝ 0.2մգ/ մ³,
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02մգ/ մ³,
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/ մ³,
- Ածխածնի օքսիդ՝ 0.4մգ/ մ³:

Աղմուկի մակարդակ

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձ չէ:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Նկար 8

2.5. Ջրային ռեսուրսներ

Տարածքի խոշորագույն ջրային երակը Հրազդան գետն է, որը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետը, Գետառը:

Սնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև:

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Հրազդան	22.6	714	9.78	308	0.57

Հանքավայրից շուրջ 120մ դեպի հյուսիս հեռավորության վրա անցնում է Ջաղացների – Ձոր գետակը:

Գեղաշեն գյուղի ջրամատակարարումը իրականացվում է Սանամար ջրաղբյուրներից: Աղբյուրները գտնվում են գյուղի հարավ-արևելյան մասում, բնակելի հատվածից մոտ 5.5 կմ հեռավորության վրա: Ջրատարը կառուցվել է 2010թ.: Բնակավայրի մոտ ջրատարը ճյուղավորվում է 2 մասի՝ դեպի արևմուտք


ուղղվում է 1685 նիշում կառուցված օրվա կարգավորման ջրամբար, իսկ դեպի հյուսիս-արևմուտք սնում է գյուղի բաշխիչ ցանցը:

ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Սևանա լճի և Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է համաձայն 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների:

2019 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի 26.5%-ը գնահատվել է 2-րդ դասի («լավ» որակի), 40.8%-ը գնահատվել է 3-րդ դասի («միջակ» որակի), 11.2%-ը գնահատվել է 4-րդ դասի («անբավարար» որակի) և 21.4%-ը գնահատվել է 5-րդ դասի («վատ» որակի):

ՀՀ մակերևութային ջրերի որակը 2019 թվականին



2.6. Հողային ծածկույթ

Հող, բնական գոյացություն՝ կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:

Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր: Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիմիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:

«Հ տարածքի հողային ծածկույթը համեմատաբար երիտասարդ է: Այստեղ հողագոյացումը հիմնականում սկսվել է պլիոցենում և շարունակվել չորրորդական ժամանակաշրջանում:

Կիսաանապատային հողեր, առաջանում են չոր տափաստանային և անապատային գոտիների փոխանցման տարածքում, չոր կլիմայի (200-350 մմ տեղումներ) և չորասեր կիսաթփուտային նոսր բուսածածկի ներգործության պայմաններում:

Տարածված են Արևելյան և Հարավ-Արևմտյան Ասիայում, Կենտրոնական Ղազախստանում, Անդրկովկասում:

Հայաստանում գորշ կիսաանապատային հողերը զբաղեցնում են Արարատյան գոգահովտի նախալեռների տարածքը և զանգվածներով հանդիպում են Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերում:

Կիսաանապատային հողերը բնութագրվում են վերին հորիզոնների մոխրագորշ կամ հարդագորշ գույնով, հումուսի սակավությամբ (1-2%), հումուսային հորիզոնների մեծ (20-35 սմ) հզորությամբ, փոշեթեփուկային ստրուկտուրայով, մեծ մասամբ պրոֆիլի ուժեղ քարքարոտությամբ և կարբոնատացմամբ, փոխանցման

հորիզոնում ցեմենտի առկայությամբ: Ստորին հորիզոնները հաճախ հարուստ են գիպսով և ջրալույծ աղերով, աղքատ՝ ազոտով և ֆոսֆորով: Վերին հորիզոններն ունեն կավավազային, իսկ ստորինները՝ ավազային մեխանիկական կազմ: Բարելավումից հետո, ոռոգման և պարարտացման պայմաններում, կարող են դառնալ բերքատու:

Գեղաշեն համայնքի տարածքում հողերը հիմնականում լեռնային սևահողեր են, չափավոր խոնավության: Հողերը ունեն կարբոնատային բնույթ: Հումուսի պարունակությունը բավարար է՝ 8%: Լեռնային սևահողերը ունեն հումուսի մեծ պաշար. 0–60սմ խորության վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրի շրջանում զարգացած են լեռնաշագանակագույն հողերը, որոնց ենթատիպերի տարածումը ներկայացված է ստորև նկար 10-ում: Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի /բուսաշերտի/ հզորությունը միջին հաշվով տատանվում է 20սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով(միջինացված տվյալներ):

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	CO ₂	գիպս CaSO ₄		
Մուգ- շագանակագույն	0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
	15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
	34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
	73-105	1.0	15.7	0.1	29.7	8.3
	105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4
Բաց- շագանակագույն	0-25	2.4	4.4	0.0	29.4	8.1
	25-39	1.4	8.4	0.5	28.8	8.4
	39-85	1.2	15.4	1.0	24.4	8.2


Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Հողային ծածկույթը պահպանվել է տարածքում առանձին հատվածներում: Հողերը ներկայացված են բաց շագանակագույն գենետիկական տիպով: Բնութագրվում են ցածր որակական հատկություններով, գրանցվել է կարբոնատների զգալի պարունակություն (գիպսի պարունակությունը մինչև 0.25%):

Հողերը ծանր կավավազային մեխանիկական կազմ ունեն: Հումուսի պարունակությունը կազմում է 1.3%:



Նկար 10. Հողերի բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզ
 Հանքավայրի համար հայցվող տարածքի 10.3հա մակերեսով տարածքի 9.1հա նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է:

2.7. Բուսական և կենդանական աշխարհ

Գեղաշեն համայնքի և դրա մերձավոր շրջանների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Կենդանական աշխարհ

Հայաստանի կենդանական աշխարհը ընդհանուր առմամբ ներկայացված է անողնաշարավոր կենդանիների ավելի քան 17000 և ողնաշարավոր կենդանիների 523 տեսակներով:

Ողնաշարավոր կենդանիները ներկայացված են ձկների, երկկենցաղների, սողունների, թռչունների և կաթնասունների դասերով, որոնցից առավել հարուստը թռչունների դասն է (349 տեսակ):

Հայաստանի տարածքը տեղադիրքով Միջերկրածովյան կենսաշխարհագրական տարածաշրջանի Իրանական, Փոքրասիական ու Պոնտոսկովկասյան մարզերի խաչմերուկ է, որով և պայմանավորված է այդ մարզերի ազդեցությունը Հայաստանի կենդանական աշխարհի տեսակների վրա:

Այս գոտիներին բնորոշ անողնաշարների ֆաունան ուշագրավ է նաև գիտական տեսանկյունից ընդգրկում է հիմնականում հնագույն միջերկրածովային և իրանաթուրան ծագման տարրեր: Տարածված են առավել ջերմասեր ու չորադիմացկուն կենդանիները, որոշ տեսակներ հանդիպում են նաև տափաստանային գոտում:

Միջատներից տարածված են կրծողների բներում ապրող եգիպտ. խավարասերը, աղոթարարները: Բազմաթիվ են ուղղաթև միջատները (հատկապես՝ դերիկորուսը, կալիպտամուսը, անապատային մորեխը, ցիկադներից՝ կանաչ ցիկադատրան և այլն), կիսակարծրաթևները (բուսակեր կրիայիկները, վառ զուլավոր գրաֆոսոմները, տրիգոնոսոմները, չոր փշեր հիշեցնող ֆիլոմորֆները, գունավոր խոշոր գիշատիչ ռեդավիրուսները): Շատ հարուստ է բզեզների ֆաունան, հատկապես՝ գիշատիչ ցիցինդելներ, բրոսկուս, սկարիտ, խոշոր, անթև կալիստենես ցեղերի տեսակները, սապրոֆագներից շատ են գոմաղբում զարգացող սկարաբեյները, կոպրերը և այլ տեսակներ: Բազմաթիվ են բուսակեր (վառ գլաֆիրուսներ, հացաբզեզներ, ոսկեբզեզներ, երկարակնճիթ կլիոններ և այլն), ինչպես նաև մակաբույծ թարախահաններ, կլերիդներ, Շելկովնիկովի արաֆիպտերուս բզեզները: Հանդիպում են ցանցաթև նեմոպտերան և լերտան, ասկալաֆուսները, խոշոր մրջնառյուծ-պալպարիսները:

Թիթեռներից բնորոշ են խոշոր առագաստաթիթեռները, սադափաթիթեռները, ճերմակաթիթեռները, գիշերային թիթեռներից՝ սատիրներն ու սֆինքսները (իշակաթնուկի և պատատուկի), բվիկները, արջաթիթեռներից՝ վառ արկտիա Հերա տեսակը, բույսերի վնասատու օկնոզինան, խոշոր կարմրասև ակսիոպենան: Բազմաթիվ են ծիաստացները, կրետ-որսորդները, մենակյաց մեղուների մակաբույծ՝ խրիզիդիդ տեսակները: Բազմազան են մրջյունները (մեսսոր, կատագլիֆիս և այլն) և մուտիլիդները: Երկթևներից տարածված են ճանճերի առանձին տեսակներ:

հանդիպում են բոմբիլիդ ընտանիքի մակաբույծ ճանճերը (անաստեխուս, տոքսոֆորա), հեմիպենդես ցեղերի տեսակները), գիշաճանճերից՝ խոշոր շիկադեղին լաֆրիան, մոխրագույն հայկ. կտենոտան, պալեարկտիկայի ամենախոշոր երկթև միջատը՝ հսկա գիշաճանճ սատանաար: Մյուս անողնաշարներից հանդիպում է խայտաբղետ կարիճը, հազվադեպ՝ խիստ թունավոր սև կարիճը: Բազմաթիվ են մորմերը՝ սև ռագոդեսները, խոշոր գալեոդները, փոքր կարշիաները: Սովորական են սարդերը, հատկապես՝ ամենախոշորները: Ցածրադիր վայրերում փափկամարմիններից բնորոշ են էշերի (*Levantina esheriana*) և Դերբենտի (*Xeropicta derbentina*), սրաբերան (*Xerosecta crenimargo*) խխունջները:



Դերբենտի (*Xeropicta derbentina*)

Նկար 11.

Կիսաանապատային գոտում հանդիպող սողուններից են Ռադդեի ժայռային (*Darevskia radde*) և շերտավոր (*Lacerta stri-gata*) մողեսները, դեղնափորիկը (*Pseudopus adopus*), երկարատու սցինկը (*Eumeces shneider*), ոսկեգույն տրախիլեպիսը (*Trachylepis aurata*), անդրկովկասյան մագլցող սահնօճը (*Zamenis hohenacker*), կովկասյան կատվաօճը (*Telescopus fallax*), գյուրզան (*Vipera lebetina*), օձերի այլ տեսակներ, սովորական մողեսօճը (*Malpolon monspessulanus*), վզնոցավոր էյրենիսը (*Eirenis collaris*), հայկական էյրենիսը (*Eirenis modestus*), որդանման կույրօճը (*Typlops vermicularis*), միջերկրածովային կրիան (*Testudo graeca*):

Ջանգեղուրի, Վայքի Է-զանգվածի և այլ շրջանների կիսաանապատային և տափաստանային գոտիներում սահմանափակ տարածքներ են զբաղեցնում անդրկովկասյան փասիանը (*Phasianus colchicus*), թուրաջը (*Francolinus francolinus*), շիկապոչ քարաթռչնակը (*Oenanthe xanthoprymna*) և թռչունների շուրջ 50 այլ տեսակներ: Այստեղ բնադրում են քարակաքավը (*Alectoris chukar*), սպիտակախածի կեռնեխը (*Turdus torquatus*), սպիտակափող սոխակը (*Irania gutturalis*),

կարմրակատար շամփրուկը (*Lanius senator*), վարսակոցարը (*Lymnocyptes minimus*): Տարածված է կարմրաթև նսպնուկը (*Rhodopechys sanguinea*), հանդիպում նաև կարճամատ ճնճուկը (*Carospiza brachydactyla*), կաթնասուններից՝ սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), փոքրասիական (*Meriones blackleri*) և պարսկ. (*Meriones persicus*) ավազամկները, կզաքիսը (*Martes martes*), սովորական աղվեսը (*Vulpes vulpes*), սպիտակատամ սրնչակը, լայնականջ [Erinaceus (*Hemiechinus*) auritus] և սպիտակափոր [Erinaceus (*E.*) concolor] ոզնիները, շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*), Օզնի մաշկեղ չղջիկը (*Vespertilio ognevi*), ականջեղ չղջիկը (*Plecotus auritus*) ևն:



Անդրկովկասյան փասիանը
(*Phasianus colchicus*)



Շիկապոչ քարաթռչնակը
(*Oenanthe xanthopyrma*)

Նկար 12-13.

Շրջանում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Բազմազան է թռչնաշխարհը, հանդիպում են սպիտակախածի կեռնեխ, լեռնային խաղտտիկ և կիսասպիտակավիզ ճանճորս: Բազմաթիվ տեսակներով ներկայացված են մորեխները (սովորական իտալական մորեխ, ձիուկ, մթնաթև, ծղրիդ): Լայն տարածված են բզեզները և թիթեռները (շաղգամ, կաղամբի ճերմակաթիթեռ): Սողունների և երկկենցաղների ֆաունան աղքատիկ է: Երկկենցաղներից տարածքում հնարավոր է հանդիպել միայն Կանաչ դողոշի (*Bufo viridis*):

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության լեռնային

տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները:

Հ/Հ	Կենդանիների անվանումը	
	Լատիներեն	Հայերեն
1	Vormela peregusna	Հարավրուսական խայտաքիս
2	Circaetus gollicus Gmelin	Եվրոպական օձակեր
3	Luscinia svecica occidentalis	Իրանական կապտափող
4	Lacerta oarva Boulenger	Փոքրասիական մողես
5	Rhinolophus Mehelyi	Մեհելիի պայտաքիթ
6	Barbastella leucomelas Gretzschmer	Ասիական լայնականջ չղջիկ
7	Capra aegagrus erxleben	Բեզդարյան այծ
8	Mabuya aurata Linneaus	Ոսկեգույն մաբուա
9	Elaphe hohenakeri strauch	Անդրկովկասյան սահնօծ
10	Telescopus fallax iberus eichwaldi	Կովկասյան կատված

Հայցվող տարածքում կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ



Նկար 14-15.

Հանքավայրի տարածքում նախնական դիտարկումների արդյունքներով չեն արձանագրվել կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր: Համատարած բուսական ծածկույթը նույնպես բացակայում է:

Բուսական աշխարհ

Շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները: Աճում են նաև օշինդրա-էֆեմերային տեսակներ՝ *Artemisia Fragrans* Willd., *Kochia Prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. Et Mey., *Tanacetum argrophyllum* (C.Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.:

Շրջանում հաճախ հանդիպող բուսական տեսակներն են.

1. Աբեղախոտ քիստաբաժակ - *Stachys atherocalyx*
2. Անթառամ կարմրավուն- *Helichrysum rubicundum*
3. Առվույտ ցանովի - *Medicago sativa*
4. Աստղազազար արևելյան - *Astrodaucus orientalis*
5. Ավելարոյս գետնատարած - *Kochia prostrata*

6. Ավելուկ գանգուր- *Rumex crispus*
7. Ավելուկ պալարավոր- *Rumex tuberosus*
8. Ավելուկ վահանաձև -*Rumex scutatus*
9. Արճախոտ եվրոպական -*Plumbago europaea*
10. Բալենի ալեհեր -*Cerasus incana*
11. Բալենի մահալեբի -*Cerasus mahaleb*
12. Բավեղ արևելյան -*Phlomis orientalis*
13. Բարդի սև - *Populus nigra*
14. Բարդի նրբագեղ - *Populus gracilis*
15. Բերենիկե արևելյան- *Veronica orientalis* և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, ոռոգում և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Ստորև բերված աղյուսակում ամփոփված են Գեղաշեն համայնքի մերձավոր տարածքներում ՀՀ Կարմիր Գրքում ընդգրկված պահպանության կարիք ունեցող բուսատեսակները:

Հ/Հ	Բուսատեսակների անվանումը	
	Լատիներեն	Հայերեն
1	<i>Centaurea Takhtajanii</i>	Տերեփուկ Թախտաջյանի
2	<i>Hieracium pannosum</i>	Ճառակախոտ փրչոտ
3	<i>Campanula Massalskyi</i>	Զանգակ Մասալսկու
4	<i>Cephalaria Tchihatchevii</i>	Ջիվան Չիխաչովի
5	<i>Astragalus Massalskyi</i>	Գազ Մասալսկու


6	Aloea Sophial	Տուղտավարդ Սոֆիայի
7	Rheum Ribez L.	Իսվրծիլ հազարջանման
8	Acantholimon avenaceum	Ոզնաթուփ վարսակային
9	Augeloass grassa	Այծակն հաստ
10	Scrophularia atropatana	Իլաճաղիկ ատրոպատանյան
11	Erincium Wanaturii	Երջակ Վանատուրի
12	Sambucus Tigranii	Թանթրվենի Տիգրանի
13	Telephium olicispermum	Տելեփ սակավասերմ
14	Astragalus eriopidus	Գազ թավուտ



Նկար 16



Նկար 17



- | | |
|--|---|
| <p>Մարզագերմարափայտանային բուսականություն</p> <p>3 Մասնակցությամբ՝ <i>Festuca versicolor</i> Tausch, <i>F. ovina</i> L., <i>F. valesiaca</i> Gaudin, <i>Phleum pratense</i> L., <i>Hordeum violaceum</i> Boiss. et Huet, <i>Carex humilis</i> Leys, <i>Trifolium ambiguum</i> L.</p> <p>Անտառային բուսականություն</p> <p>5 Կաղնուտներ, մասնակցությամբ՝ <i>Quercus macranthera</i> Fisch. et Mey. ex Hohen., <i>Q. boissieri</i> Beut., <i>Q. araxina</i> (Trautv.) Grossh</p> <p>6 Անտառային խառը մշակարույտեր, մասնակցությամբ՝ <i>Pinus pallasiana</i> D. Don, <i>P. banksiana</i> Lamb., <i>Fraxinus excelsior</i> L., <i>Hippophae rhamnoides</i> L., տեսակներ <i>Salix</i>, <i>Acer</i>, <i>Ulmus</i> և ավազոտային տարախոտերի</p> <p>Քսերոֆիլ նոսրանտառային բուսականություն</p> <p>7 Գլխու խառը, մասնակցությամբ՝ <i>Juniperus polycarpus</i> C. Koch, <i>J. oblonga</i> Bieb., <i>J. hemisphaerica</i> J. et C. presl., <i>J. foetidissima</i> Willd., <i>J. Sabina</i> L., <i>Ephedra procera</i> Fisch. et Mey.</p> | <p>Տափաստանային բուսականություն</p> <p>9 Հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ <i>Festuca valesiaca</i> Gaudin, <i>F. ovina</i> L., <i>Koeleria albovii</i> Domin, <i>K. cristata</i> (L.) Pers., <i>Bothriochloa ischaemum</i> (L.) Keng, <i>Stipa capillata</i> L., <i>S. lessingiana</i> Trin. et Rupr., <i>S. tirsia</i> Stev., <i>Elytrigia trichophora</i> (Link) Nevski, <i>Galium verum</i> L., տեսակներ <i>Agropyron</i>, <i>Andropogon</i>, <i>Scabiosa</i>, <i>Veronica</i>, <i>Artemisia</i>, <i>Achillea</i>, <i>Astragalus</i></p> <p>Կիսաանապատային բուսականություն</p> <p>11 Օշինդրա-էֆեմերային, մասնակցությամբ՝ <i>Artemisia fragrans</i> Willd., <i>Kochia prostrata</i> (L.) Schrad., <i>Capparis spinosa</i> Willd., <i>Ceratoides papposa</i> Botsch. et Ikonn., <i>Atraphaxis spinosa</i> L., <i>Rhamnus pallasii</i> Fisch et Mey., <i>Tanacetum argrophyllum</i> (C. Koch) Tzvel., <i>Poa bulbosa</i> L., <i>Bromus</i>, <i>Aegilops</i>, <i>Eremopyrum</i>, <i>Alyssum</i>, <i>Aeluropus littoralis</i> (Gouan) Parl.</p> <p>○ "ՎԵՐՈՒՄ" ՏՆՎԱՐԱՅ</p> |
|--|---|

Նկար 18

2.8. Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ

Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ			
h/h	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԻՄՆԱԳՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ (հա)
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՅՆԵՐ			
1.	«Էրեբունի»	1981	89
2.	«Խոսրովի անտառ»	1958	29 196
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐ			
1.	«Դիլիջան»	1958 - արգելոց, 2002 - ից ազգային պարկ	ավելի քան 30 000
2.	«Սևան»	1978	150 100
	«Սևան» ազգային պարկի արգելոցային գոտիներ		
1	Նորաշենի	4	Կարճաղբյուրի
2	Նորատուսի	5	Գիլլիի
3	Լիճքի	6	Արտամիշի
	«Սևան» ազգային պարկի պահպանման գոտի		
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐ			
11.	Արգական-Մեղրաձորի	1971	14 500
12.	Բանքսի սոճու	1959	4
13.	Արագածի ալպյան	1959	300
14.	Որդան կարմրի	1987	200
	Պետական արգելոցների և ազգային պարկերի կառավարման կենտրոնական գրասենյակներ		

Նկար 19. Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքներ

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը ստեղծվել է 1958 թվականին Խորհրդային Հայաստանի կենտրոնական մասի չոր նոսրանտառային, ֆրիգանային և կիսաանապատային լանդշաֆտների, բուսական և կենդանական եզակի համարվող համակեցությունների պահպանության նպատակով: Արգելոցը տեղակայված է Հայաստանի Արարատի մարզի հյուսիսարևելյան մասում, Գեղամա լեռնավահանի և Մերձարաքսյան ծալքաբեկորավոր լեռնաշղթաների միջև: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքի չափի 23213.5 հա; Արգելոցի ֆլորան հարուստ է հազվագյուտ և անհետացող բուսատեսակներով: Այստեղ ներկայացված են ավելի քան 80 տեսակներ, որոնք ընդգրկված են Հայաստանի Կարմիր Գրքում: Արգելոցի տարածքում աճում են 1849 տեսակի անոթավոր բույսեր, որոնք ներկայացված են 588 ցեղերով և 107 ընտանիքներով: Ֆլորան ներկայացված է 24 էնդեմիկ տեսակներով:

Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ, օրինակ՝ հայկական ալոճենին, Վավիլովյան աշորան (տարեկան) և այլն:

Արգելոցում հանդիպում են 283 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որից

- թռչուններ - 192 տեսակ
- կաթնասուններ - 44 տեսակ
- սողուններ-- 33 տեսակ
- ձկներ – 9 տեսակ
- երկկենցաղներ - 5 տեսակ:

Ողնաշարավոր կենդանիներից 58 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 51 տեսակ Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

Կաթնասուններից հանդիպում է կովկասյան ընձառյուծը, լուսանը, գորշ արջը, աղվեսը, անտառային կատուն, հնդկական մացառախոզը, աքիսը, քարակզաքիսը, գորշուկը, նապաստակը, գայլը, **բեզուարյան այծը**, վայրի խոզը և այլ տեսակներ:

Կովկասյան ընձառյուծը գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Արգելոցի տարածքում հանդիպում է չորասեր գիիուտներով ծածկված դարավանդներում: Որպես բույն օգտագործում են քարանձավները, ժայռաճեղքերը, խիտ թփուտները:

Լուսանը նախընտրում է կերով հարուստ գիհու նոսրանտառները: Տաք ժամանակաշրջանում բարձրանում է նաև ենթալայան և ալայան մարգագետիններ: Լուսանները սնվում են կրծողներով, նապաստակներով, թռչուններով, կարող են նաև որսալ երիտասարդ բեզուարյան այծեր և վայրի խոզի ձագեր: Վարում է գիշերային և մթնշաղային գաղտնի կյանք:

Արգելոցի ամենամեծ գիշատիչը **գորշ արջն** է: Նրա նախընտրած կենսամիջավայրերն են տերևաթափ և խառը անտառները, մշտադալար գիհուտները, քարանձավները և ժայռոտ վայրերը: Արեալը զգալի չափով ներառում է այն վայրերը, որտեղ աճում են պտղատու ծառեր, հատապտուղներ և ընկուզենիներ, որոնցով արջը սնվում է: Գրանցված է Հայաստանի և նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում, ինչպես նաև ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

Բեզուարյան այծը (*Capra aegagrus*) արգելոցի բնիկներից է: Իր անվանումը ստացել է շնորհիվ ստամոքսում կերի հանքային խտանյութերից առաջացած գնդերի՝ բեզուարների, որոնք ժամանակին լայնորեն օգտագործել էին ժողովրդական բժշկության մեջ: Կյանքի տևողությունը 10-17 տարի է, քաշը՝ 60-100 կգ: Սնվում են չոր և կոշտ բուսատեսակներով: Նախընտրում է տեղանքի ժայռաշատ, քարքարոտ, հաճախ հողմահարված ու խոր ձորերով մասնատված անմատչելի զառիթափերը: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքերում, ինչպես նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

Վայրի խոզը (*Sus scrofa*) հանդիպում է լայնատերև անտառում: Լեռնատափաստանային և մերձալայան տարածքները նրանք օգտագործում են մի լանջից մյուսը անցնելու ժամանակ^[1]:

Կաթնասուններից 13 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի տարածքում հանդիպում է 192 տեսակի թռչուններ, որոնք պատկանում են 44 ընտանիքի, որն էլ կազմում է Հայաստանի թռչնատեսակների ընդհանուր քանակի 56 տոկոսը: Գիշատիչ թռչուններից արգելոցի տարածքում հանդիպում են գառնանգղը (*Gypaetus barbatus*), գիշանգղը (*Neophron percnopterus*), սպիտակագլուխ անգղը (*Gyps fulvus*), սև անգղը (*Aegypius monachus*), տափաստանային մկնաճուռակը (*Circus macrourus*), սապսանը (*Falco peregrinus*), միջերկրածովյան բազեն (*Falco biarmicus*), դաշտային մկնաճուռակը (*Circus cianeus*),

մեծ ճուռակը (*Buteo buteo*), ցախաքլորաորսը (*Accipiter gentilis*), քարարծիվը (*Aquila rapax*) և այլ տեսակներ:

Արգելոցը միակ տարածքն է Հայաստանում, որտեղ բնադրում է **սև անգղը**: Բույնը կառուցում է գիհու ծառերի կատարին: Սև անգղի թևերի բացվածքը կարող է հասնել մոտ 3 մ, իսկ քաշը մինչև 12,5 կգ: Մյուս անգղների համեմատ, գերադասում է սնվել կենդանիների մկանային հյուսվածքներով, ավելի քիչ քանակությամբ՝ մաշկով և ոսկորներով: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում և Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում:

Խոսրովի արգելոցի տարացքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ:

Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Կոնկրետ տարածքի կենսաբազմազանության ուսումնասիրության արդյունքները կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվությունում:

2.9 Պատմության և մշակույթի հուշարձաններ

ՀՀ կառավարության 15.03.2007թ.-ի N385-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը: Համաձայն նշված փաստաթղթի, ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի համայնքում գտնվում են հետևյալ հուշարձանները

Հուշարձանի համարը	Հուշարձանախույժը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (հանրապետական, տեղական)
1	4	5	6	7
1	ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հվ-ամ	Հ
	Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.		Հ

2	ԱՍՐՈՑ «ԾԱՏՈՒՐԱԲԵՐԴ»	ուշ բրոնզի դար- հեղեղներ	գյուղի առեղծոց	Յ
	Դամբարանադաշտ	ուշ բրոնզի դար- հեղեղներ		Յ
3	ԱՍՐՈՑ «ԿԱՏԱՐԱՍԱՐ»	միջնադար	գյուղից 17 կմ հս, «Շխի չինգիլ» վայրում	Յ
4	ԱՍՐՈՑ «ԿՈՒՌԻԿԻ ՔԱՐԱՓ»	ուշ բրոնզի, վաղ եր- կաթի դարեր- միջնադար	գյուղից 2.5 կմ առ, «Թարոյանց հողեր» վայրում	Յ
	Դամբարանադաշտ	ուշ բրոնզի, վաղ եր- կաթի դարեր- միջնադար		Յ
5	ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2 հազ. - վաղ միջնադար	գյուղից 1.5 կմ հվ, Սբ. Սարգիս մատուռից առ	Յ
	Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ. - վաղ միջնադար		Յ
6	ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	12-17 դդ.	գյուղի առ մասում	Յ
7	ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	12-20 դդ.	գյուղի առ մասում	Յ
8	ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	17-19 դդ.	գյուղից հս-առ	Յ
9	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	13-17 դդ.	գյուղից 2-2.5 կմ հվ-առ, «Բալիջա» վայրում	Տ
	Եկեղեցի	13-14 դդ.		Տ
10	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	13-17 դդ.	գյուղից 4 կմ հս- առ, «Փարչիլու» վայրում	Տ
	Եկեղեցի	13-14 դդ.		Տ

11	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	17-19 դդ.	գյուղից հվ-ատ	S
12	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	17-20 դդ.	գյուղից 15 կմ ատ, «Վանուշի յուրտ» վայրում	S
13	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	19-20 դդ.	գյուղից 12-13 կմ ատ, «Բեգաքլու» վայրում	Յ
	Եկեղեցի Սբ. Հակոբ	1875 թ.		S
14	ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԲԱՐՉՐԱԴԻՐ»	13-20 դդ.	գյուղից 8 կմ հս- ատ	Յ
	Գերեզմանոց	14-19 դդ.	գյուղատեղիի ատ եզրին	S
	Եկեղեցի	19 դ.		S
15	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1.5 կմ հվ- ամ, Ջովք տանող ճանապարհի ձախ կողմում	Յ
16	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 3 կմ հս- ամ, «Հաչեք» վայրում	Յ
17	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 16 կմ հս, «Վանուշի յուրտ» գյուղատեղիից 1.5 կմ հս	Յ
18	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 20 կմ հս, «Վանուշի յուրտ» գյուղատեղիից 3 կմ հս-ատ	Յ
19	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 15 կմ հվ- ատ, «Տիգրանի ջրհորից» հվ	Յ

20	ԵԿԵՂԵՑԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ		գյուղի հվ եզրին	S
21	ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղի մեջ, Սբ. Թադևոս Առաքյալ մատուռում	Հ
22	ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղի մեջ, Սբ. Թադևոս Առաքյալ մատուռում	Հ
23	ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի մեջ, Սբ. Ստեփանոս սրբատեղիում	Հ
24	ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	գյուղի մեջ, Սբ. Ստեփանոս սրբատեղիում	Հ
25	ԽԱՉՔԱՐ	16-17 դդ.	գյուղից 0.3 կմ հվ-ամ, «Լույս գերեզման» սրբատեղիում	Հ
26	ԽԱՉՔԱՐ	16-17 դդ.	գյուղից 0.3 կմ հվ-ամ, «Լույս գերեզման» սրբատեղիում	Հ
27	ԽԱՉՔԱՐ	16-17 դդ.	գյուղից 0.3 կմ հվ-ամ, «Լույս գերեզման» սրբատեղիում	Հ
28	ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՐՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.		S
29	ՄԱՏՈՒՌ	19 դ.	գյուղի մեջ	S
30	ՄԱՏՈՒՌ	19 դ.	Ջովք-Գեղաշեն ճանապարհի եզրին	S

31	ՄԱՏՈՒՌ ՍԲ. ՍԱՐԳԻՍ	17 դ.	գյուղից 3 կմ հվ, սարի գագաթին	S
32	ՍՐԲԱՏԵՂԻ	19 դ.	գյուղի մեջ, Ա. Բաղայանի հողամասում	S
33	ՍՐԲԱՏԵՂԻ ՍԲ. ՍԱՐԳԻՍ	19 դ.	գյուղից հս-աե	S
34	ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ «ՇԱՐԱՆ ԶՐԱՂԱՑ»	19 դ.	գյուղից 2-3 կմ աե	S
35	ԶՐՀՈՐ «ՏԻԳՐԱՆԻ»	Ք.ա. 2-1 հազ., միջնադար	գյուղից 13 կմ աե	S

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը: Համաձայն նշված փաստաթղթի, ՀՀ Կոտայքի մարզում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

Հ/հ	Անվանումը	Տեղադիրքը	Դասակարգում
1	«Անանուն» խզվածքներ	Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ	Երկրաբանական հուշարձան
2	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ	Երկրաբանական հուշարձան
3	«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում	Երկրաբանական հուշարձան
4	«Պեղիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ	Երկրաբանական հուշարձան
5	«Անանուն» բյուրեղային	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում	Երկրաբանական

	թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ		հուշարձան
6	«Ծակ քար» բնական թունել	Ջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին	Երկրաբանական հուշարձան
7	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
8	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
9	«Անանուն» լանջային էրոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին	Երկրաբանական հուշարձան
10	«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Երկրաբանական հուշարձան
11	«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
12	«Հատիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ.	Երկրաբանական հուշարձան
13	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
14	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ.	Երկրաբանական հուշարձան
15	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև	Երկրաբանական հուշարձան
16	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում	Երկրաբանական հուշարձան
17	«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ. եզրին, Հրազդանի կիրճում	Երկրաբանական հուշարձան
18	«Գութանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ.	Երկրաբանական

			հուշարձան
19	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարա» գյուղատեղիի մոտ	Երկրաբանական հուշարձան
20	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Ձորաղբյուր	Երկրաբանական հուշարձան
21	«Հաղպրտանք» աղբյուր	Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարեկյան) թաղամասի արլ. ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
22	«Համով» աղբյուր	Ակունք գյուղի հվ-արմ. ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
23	«Քաղցր» աղբյուր	Արզնի գյուղից 150 մ հվ-արմ., Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
24	«Ձորի» աղբյուր	Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
25	«Ավազան» աղբյուր	Կաթնաղյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ- ից 1450 մ բարձրության վրա	Ջրաերկրաբանական հուշարձան
26	«Սագերի» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս.	Ջրագրական հուշարձան
27	«Վիշապա» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ.	Ջրագրական հուշարձան
28	«Բազմալիճք» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս.	Ջրագրական հուշարձան
29	«Լուսնալիճ» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ.	Ջրագրական հուշարձան
30	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Ողջաբերդ գյուղի հս-արլ. մասում	Բնապատմական հուշարձան

31	«Ռեզիկտային կրկես Քյորոլլի լեռան մոտ»	Արտավազ գյուղի մոտ	Կենսաբանական հուշարձան
32	«Ալայան գորգ»	Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)	Կենսաբանական հուշարձան
33.	«Թանթրվենի, Տիգրանի»	Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա	Կենսաբանական հուշարձան
Ընդամենը՝ ՀՀ Կոտայքի մարզում-33			Երկրաբանական – 20 Ջրաերկրաբանական – 5 Ջրագրական – 4 Բնապատմական- 1 Կենսաբանական - 3

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից, Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրի տարածքում, ինչպես նաև հարակից տարածքներում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Բնության հուշարձանները գտնվում են տեղամասի տարածքից 4-ից 23 կմ հեռավորության վրա:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

3.1 ՀՀ Կոտայքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը

Ինչպես արդեն նշվել է, Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրը վարչական առումով ընդգրկված է ՀՀ Կոտայքի մարզի տարածքում:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Մարզի տարածքը կազմում է 2086 քառ.կմ, որը ՀՀ տարածքի 7%-ն է: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին: Մարզն ընդգրկում է երեք տարածաշրջաններ՝ Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի: Համայնքների թիվը 67-ն է, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է:

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.1 %-ը (154584.3 հա), որոնք կազմում են Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 7.6%-ը: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (51.1%) և վարելահողերը (24.4%), որոնք համապատասխանաբար կազմում են Հանրապետության արոտավայրերի 7.5%-ը և վարելահողերի 8.5%-ը:

Մարզի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 22907.5 հա կամ մարզի տարածքի 11.0%-ը, որը Կոտայքի տարածքի համեմատ համարժեք է հանրապետության ցուցանիշին (11.2%): Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների (այդ թվում՝ արգելավայրեր, բնության հուշարձաններ) 2.6 %-ը (8694.3 հա) գտնվում է Կոտայքի մարզում, որը կազմում է մարզի տարածքի շուրջ 4.2%-ը:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների պաշարներով: Առկա են ոսկու, ալյումինի, պղինձ- մոլիբդենի, երկաթի, պեռլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելինային սիենիտների, անդեզիտաբազալտների, հրաբխային խարամների, քարաղի, զանազան շինարարական նյութերի հանքավայրեր: Մարզում

առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր՝ Բջնիի, Արզնիի և Հանքավանի, որոնք բուժական նպատակներով օգտագործելու մեծ հնարավորություններ ունեն։ Նշված հանքավայրերը շահագործվում են թերծանրաբեռնվածությամբ։

Կոտայքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, քարաթափվածքները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, մառախուղը, երաշտները և անտառային հրդեհները։ Մարզի տարածքում ավտոճանապարհներին սպառնացող քարաթափումները գտնվում են Երևան-Սևան մայրուղու 37-րդ կմ, Հրազդան-Բջնի, Չարենցավան-Արգել, Արզնի-Նոր Գեղի, Ողջաբերդ-Գառնի-Գեղարդ հատվածներում, առկա սողանքային գոտիներից առավել ակտիվ և վտանգավոր գոտիները գտնվում են հիմնականում Ողջաբերդի, Հացավանի, Հանքավանի տարածքներում։

Կոտայքի մարզի մշտական բնակչությունը կազմում է 253900 մարդ, որից՝ քաղաքային՝ 137900 մարդ (54,3%), գյուղական՝ 116000 մարդ (45.7%)։ Մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.5%-ը։ Ազգաբնակչության 97,6 %-ը հայեր են։ Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ։

Մարզի մշտական բնակչության 48.2%-ը կազմում են տղամարդիկ, 51.8%-ը՝ կանայք։ Մարզի բնակչության մեջ գերակշռում են 30-62 տարեկանները (44.8 %), ընդ որում տղամարդիկ կազմում են 43.4%, կանայք՝ 46.1%, իսկ երիտասարդները (15-29 տարեկան) կազմում են ազգաբնակչության 23.3%-ը, համապատասխանաբար՝ տղամարդիկ՝ 24.3 %, կանայք՝ 22.4 %։

Կոտայքի մարզի բնակչության կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը՝ բարձրագույն կրթություն ունեցողներ՝ 15,6%, միջին մասնագիտական՝ 15,6%, նախնական մասնագիտական՝ 4,5%, միջնակարգ՝ 37,6%, հիմնական՝ 12,5%, տարրական՝ 8,7% և չունի տարրական կրթություն՝ 5,5%։ Քաղաքներում գյուղերի համեմատաբար բարձր է բարձրագույն կրթության մակարդակը՝ 66%-ով, միջին մասնագիտական կրթության մակարդակը՝ 60%-ով։

Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, սահմանակից է 5 մարզերի և Երևան քաղաքի հետ, մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 50 կմ է: Մարզով են անցնում Մ-4 Երևան- Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման և Բալախովիտ-Մասիս (Երևանը շրջանցող) միջպետական ճանապարհները (56.18կմ): Մարզի տարածքով են անցնում Երևան- Սևան-Շորժա (68 կմ) և Հրազդան-Իջևան (20 կմ) երկաթուղիները:

Մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը: Մարզում բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի միջոցով: Ավտոմոբիլային փոխադրումները մարզում կազմում են ընդհանուր փոխադրումների շուրջ 95%-ը, ինչով և պայմանավորված է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը տնտեսությունում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «ԱրմենՏել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվասել/ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում են ԱրմենՏելը և Ռոստելեկոմը՝ 48 համայնքներում: Մարզի բնակավայրերում գործում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 66 փոստային բաժանմունքներ:

Մարզի բոլոր համայնքների բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստատալիք: Գործում է Կոտայք TV մարզային հեռուստաընկերությունը: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև Հանրային ռադիոն, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի համայնքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից, կապտաժներից՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Չնայած կատարված աշխատանքներին, կան դեռևս լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ Լեռնանիստ համայնքը չունի ջրամատակարարման ցանց:

Մարզի 29 համայնքներում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 53%-ին: Ներկայումս մարզի կոյուղու համակարգ ունեցող բոլոր բնակավայրերի կոյուղագծերը գտնվում են անմխիթար վիճակում և միացված են հոսող գետերին, ջրամբարներին:

Հրազդանի տարածաշրջանում առկա է կեղտաջրերի մաքրման չգործող կայան, որը մինչև 1992թ-ը իրականացրել է Ծաղկաձորի, Հանքավանի և Հրազդանի կոյուղաջրերի կենսաբանական մաքրում:

Մարզով են անցնում մագիստրալ գազատարեր, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 67 համայնքներից գազաֆիկացված է 62-ը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 98,6%-ը: Գազաֆիկացված չեն Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները, այս համայնքներում բնակվում են մարզի բնակչության 1,4%-ը: Նշված համայնքներից Հանքավան համայնքի գազաֆիկացումը կնպաստի Հանքավանի ջրամբարի հարակից և համայնքի տարածքներում առկա հանգստյան տների, առողջարանների կողմից առավել մատչելի էներգետիկ ռեսուրսի օգտագործման համար: Կոտայքի մարզի գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է 1051 կմ:

3.2 Ազդակիր համայնքները, ենթակառուցվածքները /առողջապահություն,

տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի

տնտեսական յուրացման բնութագիրը

Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրը ներառված է Գեղաշեն համայնքի վարչական տարածքում:

Գեղաշենի համայնքը գտնվում է Կոտայքի մարզում, մարզկենտրոն Հրազդան քաղաքից 50.0կմ հեռավորության վրա, Գեղամա լեռնաշղթայի արևմտյա ստորոտին:

Գեղաշենն իր դիրքով Կոտայքի մարզի տարաբնակեցման համակարգում վերագրվում է Աբովյանի տարածաշրջանին: Գեղաշենի վարչական տարածքը սահմաններով կից է՝ Կամարիս, Զառ, Սևաբերդ, Գառնի գյուղական և Գեղարքունիկի մարզի Գավառ քաղաքային համայնքներին: Գյուղատեղի միջով

դեպի հյուսիս-արևելք անցնում է Կամարիս-Գեղաշեն-Չառ տեղական նշանակության ավտոճանապարհը:

Գեղաշեն համայնքի վարչական տարածքը կազմում է 7178.82 հա տարածք, որից Գեղաշենի գյուղատեղը՝ 262.06հա:

Գեղաշենի համայնքի բնակչությունը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 4266 մարդ: Աշխատունակ բնակչության 40% -ը զբաղված է գյուղատնտեսությամբ, 6% տարբեր կազմակերպությունների ծառայողներ են, 22 կատարում է վարձու աշխատանք՝ մասնավոր կամ պետական սեկտորներում, կամ ունի անձնական գործ: Շուրջ 20% տնային տնտեսությամբ է զբաղված, իսկ 12% զբաղվածություն չունի:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Տարածքի գերակշռող մասը ներկայացված է գյուղատնտեսական նշանակության հողերով: Հիմնականում դրանք արոտներն են, խոտհարքներն ու վարելահողերը: Հողերից զգալի բաժին է հասնում գյուղատնտեսական այլ հողերին, որոնք թեք լանջերի ու ձորակների տարածքներն են և նպատակահարմար չեն գյուղատնտեսական ակտիվ օգտագործման համար:

Հողային ռեսուրսների՝ 7178.82 հա (100%) բաշխումը ներկայացված է հետևյալ հաշվեկշռով՝

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6800.06 հա (94.72%),
- բնակավայրերի հողեր՝ 262.06 հա (3.65%),
- արդյունաբերության, գյուղական արտադրության, ընդերքի օգտագործման և պահեստարանների հողեր՝ 61.15 (0.85%) հա,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքի հողեր՝ 0.24 հա (0,003%),
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 20,36 հա (0,28%),
- հատուկ նշանակության հողեր՝ 21.35հա (0,30%):

Գեղաշեն համայնքի բնակչությունը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 4141մարդ: Համայնքի բնակչության 48% կազմում են տղամարդիկ և 52% կանայք:

Օգտակար հանաժողի արդյունահանման աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են Գեղաշեն համայնքի բնակիչներին: Քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավվման հարցը:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Հիմնական բնապահպանական ռիսկերը

- Բացահանքի, արտաքին լցակույտի և ենթակառուցվածքների տարածքներում բուսականության չնչին քանակի ոչնչացում (տարածքը բուսազուրկ է),
- Հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում կենդանիների կենսապայմանների ձևափոխություններ,
- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ հանքային տեխնիկայի աշխատանքի արդյունքում
- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ հանքարդյունահանման աշխատանքների արդյունքում,
- Դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,
- Հանքային տեխնիկայի, կոմպրեսորային կայանի, օդափոխիչների և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկ,
 - Հանքային տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքեր,
 - Բնական լանդշաֆտի ձևափոխում:

4.2. Հանքարդյունաբերության ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները

Ա. Շրջակա միջավայրի տարրերը, այդ թվում՝

- Օդային ավազան
- Մակերևույթային ջրեր
- Հողային ռեսուրսներ
- Կենսաբազմազանություն
- Ընդերք

Բ. Բնակչությունը և նրա կենսաապահովման տարրերը՝

- Բնակչության առողջություն
- Բնակչության կենսակերպ
- Տնտեսական գործունեություն /հիմնականում գյուղատնտեսություն/
- Ենթակառուցվածքներ
- Պատմամշակութային արժեքներ:

**5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/
ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

5.1 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի աղտոտող հիմնական նյութերը փոշին է և շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցների առաջացրած ծխազագերը և գազային արտանետումները:

Չոր եղանակներին, փոշու ծավալները նվազեցնելու նպատակով, նախատեսվում է ջրցանել արտադրական հրապարակները և գրունտային ճանապարհները:

Ծխազագերի արտանետումներով մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների:

Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան ծխազագերի վնասակար արտանետումների կլանիչներ:

Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասի տարածքում ծրագրավորված աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

5.2 Մակերևույթային և ստորգետնյա ջրեր

Հանքարդյունահանման շահագործման ժամանակ ջրային ռեսուրսները օգտագործվում են փոշենստեցման, լեռնային զանգվածների խոնավացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- փոշենստեցման համար ջրցանը իրականացվում է այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

5.3 Հող

Գեղաշենի համայնքի տարածքում հողերը հիմնականում լեռնային սևահողեր են, չափավոր խոնավությամբ: Հողերը ունեն կարբոնատային բնույթ: Հումուսի պարունակությունը բավարար է -8%: Լեռնային սևահողերը ունեն հումուսի մեծ պաշար՝ 0-60սմ խորություն վրա հումուսի պաշարները կազմում են 360տ/հա:

Հողի հիմնական աղտոտումը կատարվում է ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային թափոնների աղբավայրերից և թափոնակույտերից:

ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի ավազակոպճագլաքարային հանքավայրի տարածքը ընդգրկվում է Գեղաշենի համայնքի վարչական սահմանում: Հանքավայրը շահագործվել է 1996-2003թթ.«Աբովյանի ՇԻԿ» ՊՁ կողմից, ինչի արդյունքում խախտվել է շուրջ 4,5հա մակերեսով հողածածկույթ, այդ թվում հայցվող տարածքում շուրջ 3.2հա: Համաձայն ՀՀ օրենսդրության օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը հանվում և պահեստավորվում է, հետագայում խախտված տարածքները վերականգնելու նպատակով, ինչը չի կատարվել:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. 1396-Ն որոշմամբ սահմանվում է օգտահանված բերրի հողի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները: Համաձայն այդ որոշման, այն առաջնային կարգով կիրառվում է խախտված հողերի ռեկուլտիվացման նպատակով:

Հողածածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը:

Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուկային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացման նպատակով:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում:

Հողի աղբոսումը կանխելու նպատակով արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում տեղադրվում են աղբամաններ:

Առաջացած մետաղի թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և անվադողեր/ նախատեսվում է հավաքել և իրացնել համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններում:

Մակաբացման ապարները համարվում են ընդերքօգտագործման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի համարվում են ոչ վտանգավոր թափոններ:

Ընդերքօգտագործման թափոնների վտանգավորության դասը սահմանվում է շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության աստիճանով՝ թափոնի ուղղակի կամ անուղղակի ազդեցության դեպքում:

Հանքավայրում մակաբացման ապարները հիմնականում ներկայացված են հողաբուսական շերտով, փխրուն ավազա-կավերով և կոպճաճալաքարային նյութերով, որոնց վնասակար ազդեցության աստիճանը շատ ցածր է, էկոլոգիական համակարգը գործնականորեն չի խախտվում, թափոնի վտանգավորությունը շրջակա միջավայրի համար գործնականորեն անվտանգ է:

5.4 Բուսական և կենդանական աշխարհ

Հանքավայրի բուն տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն արձանագրվել:

Օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա պայմանավորված է խոտաբուսական ծածկույթի խախտման հետ, որը հետո կվերականգնվի ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքում իրականացնելով կենսաբանական ռեկուլտիվացիա: Ինչպես արդեն ներկայացվել է («Բուսական և կենդանական աշխարհը» բաժին)՝ տարածքը խոտածածկ է, չկան անտառապատ տարածքներ: Հանքավայրի տարածքում կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել:

Բացառվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:

5.5 Պատմամշակույթային արժեքներ

Հանքարդյունահանման համար հայցվող տարածքը պատմամշակույթային գրանցված կոթողներից գտնվում է նվազագույնը 3կմ հեռավորության վրա, ուստի ոչ մի բացասական ազդեցություն հանքավայրի շահագործման ընթացքում չի սպառնում:

Սակայն հանքարդյունահանման աշխատանքների տեղամասում պատմամշակույթային նշանակություն ունեցող և մարդու գործունեության արդյունք հանդիսացող պատմական հետաքրքրություն ներկայացնող կառույցների, շինությունների, գերեզմանների, իրերի և այլնի հայտնաբերման դեպքում ՀՀ օրենսդրության պահանջով նախատեսվում է դադարեցնել դրանց տարածքում արդյունահանման աշխատանքները, այդ մասին տեղեկացնել պետական լիազորված մարմնին և հրավիրել համապատասխան մասնագետներ, որոնց օգնությամբ կկատարվի հայտնաբերված հուշարձանների ուսումնասիրություն, կոնսերվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Արտադրական հրապարակ	Ավտոտրանսպորտ	Արդյունահանման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	-	-
Հողեր	ցածր երկարատև	ցածր կարճատև	ցածր երկարատև
Կենսաբազմա-	աննշան	աննշան	աննշան

զանություն			
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

5.6 Սոցիալական ազդեցություն

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը կապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը կուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ: Բոլոր աշխատակիցները կապահովվեն անհատական պաշտպանության միջոցներով:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Նախատեսվում է կազմակերպել երիտասարների ուսուցում, իսկ մյուս աշխատողները կանցնեն վերապատրաստում:

5.7. Բնապահպանական մշտադիտարկումների պլան

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը /**Էկոլոգիական մոնիթորինգը**/ շրջակա միջավայրի, այդ թվում շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի, իրավիճակի **համալիր դիտարկում է**, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի վիճակի փոփոխությունները:

Էկոլոգիական մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը /արտանետումները, ֆիզիկական ազդեցությունը, մնացորդային ազդեցությունը, վտանգները/, շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու:

Մշտադիտարկման պլանը հստակեցնում է դիտարկման օբյեկտը /տեղամասը/, չափվող կամ վերահսկվող պարամետրը, նրա թույլատրելի սահմանը, չափման կամ վերահսկման մեթոդը, հաճախականությունը և այլն:

Մշտադիտարկումը իրականացվում է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների նկատմամբ՝ մակերևույթային և ստորգետնյա ջրեր, մթնոլորտային օդ, հողեր, կենսաբազմազանություն, սոցիալական միջավայր, ֆիզիկական ազդեցություններ, հանքարդյունահանման համալիրի կառույցներ /լցակույտեր, բացահանք/, և այլն:

Եթե չափված պարամետրերը գերազանցում են ցույց տալիս կամ զարգացման դինամիկ միտում, ապա պարզվում են այդ գերազանցումների պատճառները, ճշտվում են հակազդեցության գործողությունները, միջոցները, և վերացվում են խախտումները՝ նախատեսված միջոցառումներին համապատասխան:

Շրջակա միջավայրի իրավիճակի մասին տեղեկատվությունը, որը ստանում ենք էկոլոգիական մշտադիտարկման արդյունքում, թույլ է տալիս կանխարգելել կամ


նվազեցնել շրջակա միջավայրի վրա նախաձեռնության ազդեցությունը, պլանավորել տարածաշրջանի բնապահպանական իրավիճակը և համապատասխան հետևություններ անել տարածաշրջանի կայուն զարգացման բնագավառում:

Տեղական բնապահպանական մշտադիտարկման արդյունքներով հետևություններ են անում տվյալ նեղ տարածաշրջանի, ազդակիր համայնքի սահմաններում, շրջակա միջավայրի, մարդու բնակության և գործունեության միջավայրի վրա համալիրի ազդեցության մասին:

Շրջակա միջավայրի մշտադիտարկման արդյունքները պետք է անհապաղ հրապարակվեն հասարակության և պետական լիազոր մարմինների համար ընդունելի ձևաչափով:

Այդ կետերի մասին տեղեկությունը ներկայացվում է նաև աղյուսակի տեսքով: Մշտադիտարկման հենակետային ցանցում դիտակետերի քանակը և տեղադիրքը ընտրվում է հաշվի առնելով հանքավայրի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական առանձնահատկությունները և պայմանները:

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ:



- մթնոլորտային օդի մշտադիտարկման կետ
- հողի աղտոտվածության մշտադիտարկման կետ
- կենսաբազմազանության մշտադիտարկումների տարածք

Նկար 20

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, լցակայանի տարածք	- հանքափոշի, ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	բացահանքի տարածք, շահագործական փորվածքներ, արտադրական հրապարակ, լցակայանի տարածք	- հողերի քիմիական կազմը հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- - տարեկան մեկ անգամ ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	ընդերքօգտագործման տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ
Աղմուկ և թրթռում	Հանքի տարածք	Աղմուկի մակարդակը	Աղմուկի մակարդակի գործի քային չափում	ամսական մեկ անգամ

5.8. Բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացող միջոցառումները և մշտադիտարկման գործողությունները	Պատասխանատվությունը	
			Կատարող	Վերահսկող
Ն ա խ ա պ ա տ ր ա ս տ ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն ե ր				
1. Ճանապարհների, աշխատանքային հրապարակի կարգաբերում	<p>1. Փոշու արտանետում</p> <p>2. Դիզ. վառելիքի այրման արգասիքների արտանետում</p> <p>3. Հողերի աղբոսում և աղտոտում դիզ. վառելիքի և յուղերի արտահոսքից</p> <p>4. Հողերի խախտում</p>	<p>1. Չոր եղանակներին ջրել արտադրական հրապարակները:</p> <p>2. Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան կլանիչներ;</p> <p>3. Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը և ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացիայի համար:</p> <p>Արտադրական հրապարակի տարածքից նախապես օգտահանել բերրի հողաշերտը և պահեստավորել ռեկուլտիվացման աշխատանքների ժամանակ օգտագործելու նպատակով;</p>	«ՀԻԴՐՈՇԻ ՆԱՐԱՐ - 5» ԲԲԸ	<p>ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Համայնքապետարաններ</p> <p>ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p>
Հ ա ն ք ա ր դ յ ո ն ա հ ա ն մ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն ե ր				

<p>2. Հանքավայրի շահագործում</p>	<p>1. Մթնոլորտային օդի աղտոտում</p> <p>ա/Փոշու արտանետում</p> <p>բ/ դիզ. վառելիքի այրման արգասիքների արտանետում</p> <p>2. Հողերի խախտում</p> <p>3. Հողերի աղբոտում վառելանյութի և յուղերի արտահոսքից և անօգտագործելի պահեստամասերով</p> <p>4. Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա</p> <p>5. Սարքավորումների սպասարկման</p>	<p>ա. Չոր եղանակներին ջրել արտադրական հրապարակները:</p> <p>բ. Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները պետք է ունենան կլանիչներ</p> <p>Աշխատաքների կատարմանը զուգընթաց կատարել խախտված հողերի ռեկուլտիվացիա. հարթեցում և հողաշերտի փոում</p> <p>1/Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը և ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների:</p> <p>2/ Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուքային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացիայի համար: Առաջացած մետաղի և ռետինի թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և ավտոդողեր/ հավաքել և ուղարկել ուտիլիզացիայի:</p> <p>3/Տեխնիկա-տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը, ընթացիկ վերանորոգումը իրականացնել տեխնիկական սպասարկման կայաններում:</p> <p>1. Բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս: Նախատեսվում է իրականացնել կենսաբանական ռեկուլտիվացիա, կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ</p> <p>1. Տեխնիկա-տրանսպորտային միջոցների վնասումը իրականացնել վնասման կայաններում կամ հատուկ սահմանված և կահավորված վայրերում</p>	<p>«ՀԻԴՐՈՇԻ ՆԱՐԱՐ - 5» ԲԲԸ</p>	<p>ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>ՀՀ բնապահպանության և</p>
----------------------------------	---	---	--------------------------------	---

	<p>հետևանքով մակերևութային ջրերի աղտոտում</p> <p>6.Շրջակա միջավայրի աղբոտում կենցաղային աղբով</p> <p>7.Աշխատակազմի առողջության և անվտանգության վնասում</p> <p>8.Ֆիզիկական ազդեցություններ /աղմուկ, տատանումներ/</p>	<p>1.Կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում սննդի ընդունման կետերում: Կանոնավոր աղբահանում:</p> <p>Աղբը հավաքել հատուկ աղբահավաք տարաներում, ապա հեռացնել համայնքի կողմից հատկացված վայրեր:</p> <p>1.Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով: Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p> <p>1.Տեխնիկա-տրանսպորտային բոլոր միջոցները պետք է ունենան համապատասխան խլացուցիչներ: Արգելել առանց խլացուցիչների տեխնիկական միջոցների աշխատանքը: Բոլոր աշխատողները և վարորդները պետք է ունենան համապատասխան անհատական պաշտպանիչ միջոցներ:</p>	<p>ընդերքի տեսչական մարմին</p> <p>ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին</p>
--	---	---	--

Հ ա ն ք ի փ ա կ ու մ

<p>3. Հանքարդյունահանման աշխատանքների ավարտ</p>	<p>1. Շրջակա միջավայրի վրա մնացորդային ազդեցություն</p>	<p>1. Հեռացնել տեխնիկա-տրանսպորտային միջոցները և արտադրական սարքավորումները: Ապամոնտաժել ժամանակավոր կառույցները, դուրս բերել շինարարական աղբը և չօգտագործված նյութերը:</p> <p>2. Ավարտել ռեկուլտիվացման աշխատանքները. հարթեցում և բերրի հողաշերտի փոում:</p> <p>3. Հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական մեղմացման ծրագրի ամբողջական կատարում:</p> <p>4. Հիմնական ճանապարհների բարեկարգում:</p> <p>5. Հանքի փակման մշտադիտարկման պլանի իրագործում նախատեսված ժամանակաշրջանում:</p>	<p>«ՀԻԴՐՈՇԻՆԱ ՐԱՐ - 5» ԲԲԸ</p>	<p>ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p>
---	---	--	--------------------------------	---

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. ՀՀ Վիճակագրական կոմիտեի armstatbank.am
3. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
4. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2011թ
6. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
7. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
8. ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Արմավյանի համայնքի պաշտոնական կայքեր
9. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծ
10. Հայաստանի Ազգային Ատլաս - հատոր Ա–2007 թ.